Ի հեսիոսս ուղևորէր.
Եւ ի Ս. Քաղաքն հասանէր։
Զանօրինականսն տեսանէր.
Անդ ուր փրկչին ներգործեալ էր.
Խընդայր հոգւովն և բերկրէր,
Մարմնովն յերկնի գոլ համարէր։
Ցընծայր քաղաքն և զարդարէր.
Զհայրապետ սուրբ ընդունէր.» (Բազմ. 1873 էջ 268)։

Վկայասէր վախճանեցաւ 1105ին և թաղուեցաւ Քէսունի Կարմիր վանքը. իր արժանիքին մասին բաւական է յիշել միայն Ներսէս Շնորհալիին քանի չափաւ քերթուածին հետևեալ կտորը. «երկրորդ Մեսրոպ մեզ երևեալ. զգիրս բարգումս թարգմանեալ. առ ի Յունաց և յԱսորւոց. ճառս սրբոց վերաբերեալ» (էջ 546)։

ԳՐԻԳՈՐ (ՄՀՏ.) ԿՈՍՏԱՆԴԵԱՆ, ՋՄԻՒՌՆԻԱՑԻ.—Աչկ. Վանանդեցի Միրզայեան Յովհան քհի. 1857ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը։ Իր տիկնոջ Հռիփսիմէի ծախքով կը կառուցուի Զմիւռնիոյ աղջիկներու վարժարանը, որ 1849ին այրած էր. և կը կոչուի Հռիփսիմեան վարժարան։ Մնտ. Գրիգոր վախճանած է 1891ին Զմիւռնիոյ մէջ։ ՄՁ. թ. 171, տաղաչափեալ գրուածքը Կոստանդեանինն է, որով ան կը խնդրէ Վանանդեցի քհէն. որպէս զի յօրինէ Հայոց Պատմութիւն մը։

ԳՐԻԳՈՐ, (ՄՀՏ.) ԽԱՉՕ, ՄԱՆՈՒՇԱԿ ԵՒ (ՄՀՏ.) ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԵԾԱՏՈՒՐԵԱՆՑ, ԲԻՆԿԵԱՆՑԻ.— 1758ին, Ս. Յակոբի վանքին կը յիշատակեն արծաթեայ կանթեղ մը (Ցուց. Պ.)

ԳՐԻԳՈՐ ՄԱՐԳԱՐԵԱՆ, ՊՈԼՍԵՑԻ.— (1859-1922). 1912ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը իր եղբօր՝ Սիմէոնի (1852-1916) և քրոջը Օր. Նեկտարի հետ (1845-1916)։ Ասոնց մահուանէն յետոյ՝ Գրիգոր Ս. Յակոբի վանքին կը կըտակէ 1157 եգիպտ. ոսկիի գումար մը. կը վախճանի 13 Նոյեմբեր 1922ին և կը թաղուի Սիոնի գերեզմանատան իր ընտանեկան դամբարանին մէջ։ Իր գոյքերը, ըստ կտակի կը յանձնուին վանքին (Արձագր. Տն. Ժողովի Նիստ ՃԺԶ. 15 Նոյ. 1922)։ Հանգուցեալին կտակած գումարը կը յատկացուի 26 Ապր. 1928ին վանքին մէջ նորոգ կառուցուած Ազգ. երկսեռ նախակրթարանին և մանկապարտէզին, մասնաւոր յիշատակարանով մը։